

"Տարածակ"ի խմբագրություն
839.82

U-41


ԿՆՈՒՑ ՀԱՄՍՈՒՆ



ԿՆՈՒՑ =

ՀԱՆԿԵՐՈՒՄ

(Համառ. լուսաք.)



839.82


U-41

30 JUL 2013

5138

03 AUG 2005


02 NOV 2009



ԿԵՆՏՔԻ ՃԵՆՏԵՐՈՒՄ

(Լուսարան.)

Ռուսաստանի ինչպէս զաւառներում, նոյնպէս և մայրաքաղաքներում բաւական ազմուկ հանեց և ծայրայեղ, տարբեր քըննադատութիւնների, կարծիքների արժանացաւ Համսունի այս վերջին պիէսը: Կոյրանակու, է. Բ.-ի, Ս. Կարլո՛ովսկու, Ի.-ի և այլոց քննադատութիւնները քիչ չեն օգնել մեզ այս պիէսի ուսումնասիրութեան ժամանակ, թէև վերջի վերջոյ առանձնապէս և ոչ մէկի հետ, այդ քննադատներից, համաձայնել մինք չը կարողացանք:



9717-71




Եթէ կային մարդիկ, որոնք
գտնում էին մեծ արժանաւորու-
թիւններ այս պիէսի մէջ, որպէս
սիմօլիկ գրաւածքի, կային և այն-
պիսիներ, որոնք չը ժխտելով
պիէսի արժանաւորութիւնները,
որպէս միջակ գրաւածքի, ոչ մի
սիմօլ չէին տեսնում նրա մէջ:

Այլ է մեր կարծիքը:

Յուսալով, որ մեզ պիտի յա-
ջողի մօտ ապագայում լոյս ըն-
ծայելու մի քանի այն պիէսներին
ուսումնասիրութիւնները, որոնք
աչքի են ընկնում Թիֆլիսի Հա-
յոց Դրամատիկական Ընկերու-
թեան, դերասանական խմբի,
ներկայ թատերաշրջանի ռէպեր-
տուարի մէջ, այս անգամ մենք
բաւականանում ենք տալով
ճկանքի ցանկերս-ի այս համառօտ
լուսարանութիւնը, թէ՛ ինչպէս
ենք մենք հասկանում և բացա-
տրում այդ պիէսը:


Երգչուհի, գեղեցկուհի Իւլիա-
նան, որ արտիստական մեծ տուր-
նէ է կատարել ու թագաժառանգ-



նւրի և իշխանների հետ ընթրել,
դռնելով իր կեանքի գաբունը ու-
կուն, դարձել է ֆրու Հիլէ—
կմախքացած, հարուստ ծերունի
Հիլէի կինը:

Սիրոյ, գգաւնքի, ջերմութեան
կարօտ ֆրու Հիլէն յագեցնում է
կամ աւելի ճիշտ է ասել, ուզում
է յագեցնել իր այդ կարօտը մի
կեղտոտ անձնաւորութեան, մի
սրիկայ՝ Ալէքսանդր Բլիւմէնշէ-
նի և իր կենակցութիւնով: Բլիւ-
մէնշէնին նա տալիս է անուղ-
ղակի ճանապարհներով նիւթա-
կան օգնութիւն և լիայփայլում է,
յուսալով զէթ սրա մէջ գտնել
մի քիչ ջերմութիւն... Բայց հան-
գամանքները փոխւում են, Ա-
լէքսանդրը նշանւում է հարուստ
Նորմանի աղջկայ՝ Ֆրէօկէն Նոր-
մանի հետ և պատրաստւում է
Արգենտինա ճանապարհելու,
ուր նրան պաշտօն է խոստացել
նաբօք Բաստը: Մերունի Հիլէի
ծննդեան 70-ամեակի առթիւ
Բաստը, Բլիւմէնշէնը և մի լէյ-
տենանտ հրաւիրւում են Ֆրուի






կողմից, այստեղ պարզուամ է, որ ֆրու Հիլէի առաջնորդում, թէև շատ կարճատև, բայց եղել է Բաստի հետ մօտ յարաբերութեան մէջ: Նոյն խմբին և Փրէօկէն Նորմանին, մենք պատահում ենք և հիւրանոցի շքեղ համարներից մէկում, ուր սրանք բոլորը Բաստի հրաւերով եկել են Արգենտինայից բերած նրա հազազիւտ իրերը տեֆնելու: Այս հիւրանոցում է նւագում Չայկովսկու տաղանդաւոր արտայայտիչ Փրէդրիկսէնը, որ մի ժամանակ յայտնի երգչուհի Իւլիանային է դաշնակցել: Միակ մարդը, որ առայժմ խօսակցում է ֆրուի հետ այն ժամանակ, երբ բոլորն էլ մի կողմ քաշւած, Փրէօկէն Նորմանին են շրջապատել ու երկընդրադում: Փրու Հիլէն, որ սաստիկ նախանձ է զգում զէպի ֆրէօկէն Նորմանը, օգտւելով բուպէական միայնակութիւնից, ոյժով բռնում է վերջինիս ձեռքը, մօտեցնում Բաստի բերած օձի արկղին և բացում: Աղմկի վրայ



ներս են թափւում և խանգարում ֆրու Հիլէի հրէշաւոր մըտադրութեան իրագործումը: Օձը խայթում է միայն Բաստին, որին հիւանդանոց են տանում: Հիլէի տանը լուր է ստացւում, որ Բաստը վախճանւել է հիւանդանոցում: Այստեղ, ֆրու Հիլէի տանը հնավաճառ Հիւլէսէնը տաճկական ծխափողի առթիւ ծագած վիճաբանութեան ժամանակ, Փրէօկէն Նորմանի ներկայութեամբ դիմադուրկ է անում Բիւմէնշէնին, որից յետոյ Փրէօկէն Նորմանը թողնում և վերջնականապէս հեռանում է: Լէյտենանտ Լիւնումը, որ մինչ այդ, կարծես, յոյս ունէր Փրէօկէնի ուշադրութեանն արժանանալու, երբ տեսնում է, որ նա թողնելով Բիւմէնշէնին, մի ակնաբեկ անգամ չըձգեց իր վրայ—սա էլ զնում ինքնասպանութիւն է գործում: Ալէքսանդրը սրիկայաբար սպառնալիքներ կարդալով ֆրու Հիլէին, վերցնում է թանկագին ծխափողը և փողերը ու հեռա-





նում նրանից: Քալիս է Ֆրէդ-
րիկսէնը խոստացած զգեստները
տանելու. սա Ֆրուի նախկին ար-
ւեստակիցն է: Ֆրէդրիկսէնն էլ
հակառակ Ֆրուի թախանձանք-
ներին՝ մի քիչ մնալ իր հետ, թող-
նում ու հեռանում է: Ֆրուն
մնում է մենակ, մինչև որ գալիս
է Նեդրը (լոկ կենդանականը) բե-
րելով Ֆրուի համար ինքն իրեն և
Բաստի վերջին ողջոյնը: Ահա
այս է պիէսի համառօտ բովանդա-
կութիւնը, կամ աւելի ճիշտ է ա-
սել, մեր ստացած ընդհանուր
տպաւորութիւնն ընթերցման ժա-
մանակ:

... «Իսկ այժմ ամեն մի քայլա-
փոխում ևս աւելի ու աւելի եմ
ստորանում, աւելի ու աւելի եմ
ողորմելի դառնում»... ասում է
Ֆրու Հիլէն:

— «...Ուրախ ծիծաղեցէք և մի
յուսահատէք: Տարիների հետ
մենք բոլորս էլ ընկնում ենք...»
պատասխանում է նրան նաբօր
Բաստը:

Երբ մենք տուաջին անգամ կար-




գացինք պիէսը, մեզ թւաց, որ Բաս-
տի այս խօսքերն են առիթ աւել
Համսունին ներկայ աշխատու-
թիւնը հրապարակ հանել: Բայց
մի քիչ մեզ էլ, ինչպէս և շատե-
րին տարօրինակ թւաց, — «Տարի-
ների հետ մենք բոլորս էլ ընկ-
նում ենք»... Այո, ճիշտ է և այդ
մենք բոլորս էլ գիտենք: Եւ մի-
թէ մի այսպիսի պարզ ճշմար-
տութիւն ասելու համար անհրա-
ժեշտ էր նաբօր Բաստին բերել
տալ Արգինտինայից և մի ահա-
գին էլ պիէս գրել: Վերջապէս
միթէ արեւստի նպատակը ճշ-
մարտութիւններ ասելն է:

Ո՞ւմ չէ յայտնի, որ ով սկսել է
վատ, նա վատ էլ կը վերջացնի:


Ինչ մի սուանձին բան կայ
նրանում, որ նախկին երգչուհի
Իւլիանան, յայտնի թագուհի Իւ-
լիանան, այսօր հարուստ ծերունի
Հիլէի կինն է, որն այժմ այդպէս
ամուր ուզում է պահել իր վեր-
ջին սիրածին-սիրեկանին, որով-
հետև դիտէ, որ հետեւալը աւե-
լի լաւը չի լինելու և նրա հետ






ինքն էլ աւելի և աւելի է ընկ-
նելու: Այո, ինչ մի առանձին
հետաքրքիր բան կայ այս բոլո-
րում: Ձգացինք, որ այսպէս շա-
րունակելով, մենք պիտոյ կարող
ենք այնպէս քարուքանդ անել,
որ քար քարի վրայ չը մնայ. փա-
կեցինք և դէն ձգեցինք, բայց իս-
կոյն աչքներին ընկաւ հեղինակի
ամուսնը՝ «Կնուտ Համսուն»-ու, մը-
տածեցինք: Այսպէս թէ այնպէս
Համսունն է և ոչ մի հիմք չու-
նինք ենթադրելու, որ նա կատա-
կել կամ տարօրինակութիւն է
արել: Եւ երբ աւելի խորը սկսե-
ցինք նայել, այն ժամանակ միայն
տեսանք ու զգացինք թէ ինչ երկու
խոշոր խնդիրներ է դրել իր ա-
ռաջ Համսունը և որքան արեւա-
տօրէն նրանց լուծել:

1) Ոսկին—որ առաջ է բերել
ժամանակակից հասարակարգը
և նրա տոեղծած պոստիկ համայ-
նակենցադը և 2) այն անբացա-
տրելի ոյժը, որին ենթակայ ենք
բոլորս, այն թուրը, որ կախւած
է բոլորիս գլխին—ճակատագիրը:



Նախ առաջինի մասին:
Շնորհիւ ժամանակակից բուր-
ժական հասարակարգի ստեղծ-
ւած պոստիկ համայնակենցադի,
օր-օրի վրայ մենք հեռանում,
բաժանում ենք մայր բնութիւ-
նից, երկնքից, արևից...

Ահա այս պայմաններն են, որ-
ոնց Համսունը անւանել է «Կնու-
տի օսկի»: Տիրապետող ոյժը ու-
կին է: Նա է, որ վաճառել է
տալիս ամեն ինչ, նրանով է, որ
ձեռք է բերում ամեն ինչ: Փա-
ղաքշանք, սէր, արեւտ, կին...
Բոլորը դրա թաթերի, ճանկերի
մէջ է: Անսահման է այդ ճանկե-
րի ոյժը... Բայց մի բան կայ
միայն, որ չէ տալիս ոսկին, մի
բան կայ, որ վեր է նրա ոյժից
—հոգու անդորրութիւնը.. խա-
ղաղութիւնը... երջանկութիւնը:
Այդ երջանկութիւնը մեր մէջ է,
մեր և բնութեան մէջ եղած կա-
պի մօտիկութեան մէջ. իսկ ոս-
կին, նրա ստեղծած պայմանները,
զալիս են մեզ հեռացնելու, դա-
լիս են խանդարելու այդ կապը:





Սիրալը բարախող, սիրոյ, գգւանքի, փաղաքշանքի, ջերմութեան կարօտ Իւլիանային, կիանքի ճանկերը տւել են 70 տարեկան դառամեալ ծերունի Հիլէին. ճիշտ է այդ, ճանկերը տալիս են Իւլիանային գնովի կ' սէր կ' փաղաքշանք... Բայց գնովի սէրը չէր կարող և չէ տալիս նրան երջանկութիւն: Եւ անա Իւլիանան սոսկումով տեսնում, դիտակցում է, թէ ինչպէս անցնում են իր տարիները, անգոյն, մաայլ, օտոր... Ահա անցնում է նրա քառասուն տարին, իսկ ինքը դեռ կարօտ է սիրոյ, գգւանքի, ջերմութեան... Եւ անա սկսում են նրա սոսկալի տանջանքները. նա թրրպրրտում է այդ ճանկերում, թրպրտում, բայց աղատուել չի կարողանում:

Նոյն ոյժը ընդգծում է Համսունը և III գործ. մէջ:

Նաքօք Բասարը ուզում է ծաղիկներ, մեծ քանակութեամբ. նրան պատասխանում են, որ լսանութիւնները կողպած են և անկա-



րելի է ծաղիկներ գտնել: «Ես ուզում եմ ծաղիկներ, կտարեք դռները, ոչնչացրէք խոշորդատները և բերէք ծաղիկներ. մինք պէտք է ծաղիկներ ունենանք: Ես վճարում եմ». 5 բոպէից յետոյ անագին քանակութեամբ ծաղիկներ թափում են նրա ոտքերի տակ — «Ես պահանջում եմ, որ երաժշտախումբը նւագի, ոչ թէ այնտեղ, այլ այստեղ. ինձ մօտ, իմ սենեակում»: 5 բոպէից յետոյ երաժշտախումբը, տաղանդաւոր Փրէզրիկսէնի դիկավարութեամբ խոնարհած զլիսով նաքօքի սենեակէն են գալիս նւագելու, նրան գոհացնելու: Ճանկութիւն յայտնւեց նաքօքի մէջ տեսնել Փրէօկէն Նորմանին իր մօտ, իր կողքին և անա կարգադրում է ռեզարկել օտոմօքիլը Փրէօկէն Նորմանին բերելու. 5 բոպէից յետոյ Փրէօկէն Նորմանը նրա կողքին է... և այսպէս անվերջ ընդգծում է այդ սոսկալի ոյժի անսահման լինելը: Համսունը, որ անջբան սիրում է բնութիւնը, արևը, եր-





կինքը, չէր կարող անտարբեր մնալ այն պրոնիկ համայնակիցացազի առաջ, որ ստեղծել է շնորհիւ այն պայմաններէ, որոնց մասին արդէն խօսեցինք: Եւ ահա նա ողբում է այս ցաւը իր հոգու, իր գեղեցիկ հոգու բոլոր լարերով: Սակայն դիմենք երկրորդին՝ ճակատագրին:

Համսունի այս պիէսը նոյն այն շշմեցնող յայտն է, որի մասին այնպիսի ծաղրածութիւններով խօսում է երաժիշտ Յրէզրիկսէնը, որի տանջանքները ուժեղ արագիզմի են համուժ: Մի սոսկալիքսօս է այս պիէսը, ինչպէս և ինքը կեանքը: Տէր Ասուած, ինչ չըկայ նրա մէջ: Երեկայ հոչակաւոր Իւլիանան, այսօր զառամեալ Հիլէի կինը: Երկրի կեղտ Բիւմէնչէնը—որին այնքան ամուր ուզում է պահել, կեանքի ճանկերում թրպրտացող Փրու Հիլէն, անյաջող սիրուց չարութեամբ լիքը, լէյտէնանտ Լիւնումը, հարուստ ծերունի Հիլէն, Արգենտինայից եկած Պէր Բաստը,



պայծառ, սիրունիկ, որպէս Թիթեո, Ֆրէօկէն Նորման, Չայկովսկու երեկայ տաղանդաւոր արտայայտիչ՝ այսօր անդարձ փչացած Յրէզրիկսէնը, որ կաֆէնիւրում ամբոխին է զարձացնում, ծիծաղելի և գերեզմանի մարմնացում Թէօօրը, նեգրը, երաժշտութիւն, օձ, ծաղիկներ, սարսափ, ատրճանակներ, ուրախութիւն, վիշտ... բոլորը, բոլորը խառնել են իրար և մի սիրտ մաշող արագէզիա դրել մեր առաջ: Ուրախացէք, խմէք, երգէք, սիրէք, միւնոյն է, չէք ազատել կեանքի ճանկերից, նա այստեղ է, ձեզ մօտ: Թէկուզ Արգենտինայից, միւնոյն է, նա կախած է ձեր գլխին և ազատել նրանից ոչ ոք չի կարող:

Համաշխարհային, համամարդկային տրագեդիան է ծաւալուում մեր առաջ Համսունի այս պիէսով, որը ուրախութեան, սարսափի և տանջանքի մի հսկայական սիմֆօնիա է:



15

[Faint, illegible handwritten text, likely bleed-through from the reverse side of the page.]

Թիֆլիս, Տղարան «ՀԵՐՄԷՍ»

1911

<< Ազգային գրադարան



NL0174112